Տպագրված է 3 օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 13/09/2010թ թիվ 10-Լ որոշմամբ

Փոփոխված է 09/12/2010թ թիվ 32-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Վաչե Գաբրիելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«09» դեկտեմբերի ապրիլի2010թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-005

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2010

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամ ապահովագրական ընկերությունները մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը կնքվող ԱՊՊԱ պայմանագրերում ապահովագրավճարի վճարման կարգ սահմանելիս պարտավոր են պահպանել հետևյալ սահմանափակումները՝

1) անկանխիկ ձևով վճարվող ապահովագրավճարի (միանվագ կերպով կատարվող ապահովագրավճար) կամ դրա առաջին մասի (տարաժամկետ կերպով կատարվող ապահովագրավճար) փաստացի վճարման համար տրամադրել ոչ ավելի, քան 5 աշխատանքային օր.

2) տարաժամկետ կարգով վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասը չպետք է պակաս լինի ապահովագրավճարի ամբողջ չափի 50%-ից, իսկ ապահովագրավճարի մնացած մասի վճարման համար չպետք է սահմանվի ավելի ուշ ժամկետ, քան պայմանագրի գործողության ժամկետի կեսը:

2. Սույն կանոնների 1-ին կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում պետական սեփականություն համարվող ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի նկատմամբ: